Արձանագրություն N 3
ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով գնանշման հարցման
Գնահատող հանձնաժողովի նիստի (շարունակություն)

24 հունիսի 2021թ
ժամը 15:30

ք. Երևան

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Է.Հակոբյանը
անդամներ՝ Ս.Գասպարյանը, Ե.Վարդանյանը
քարտուղար՝ Գ. Ջանջուղազյան

I. Հայտերի գնահատման արդյունքների մասին (շարունակություն)

(Է.Հակոբյան)

1. Գնահատող հանձնաժողովը. ուսումնասիրեց հայտերով ներկայացված փաստաթղթերը, այդ թվում առաջարկված ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և արձանագրեց, որ.

1.1 Մասնակիցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրությունը համապատասխանում է հրավերով սահմանված պահանջներին:

1.2 «ԷՄԳԱ» ՍՊԸ-ի ներկայացրած հայտում կա անհամապատասխանություն, մասնավորապես. հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերի 2-րդ մասի 3.1 կետով սահմանված պահանջներին. ծրարում ներառված փաստաթղթերը պետք է կազմված լինեն բնօրինակից (բացառությամբ 3-րդ կողմի կողմից տրամադրված կամ հաստատված փաստաթղթերի, որոնց դեպքում ներկայացվում է դրանց՝ բնօրինակից պատճենահանված տարբերակը) և 1 /մեկ/ օրինակ պատճենից: Սակայն, հայտով ներկայացված փաստաթղթերը (հավելվածներ 1, 1.1 և 2) էլեկտրոնային թվային ստորագրությամբ ստորագրված փաստաթղթերի պատճեններն են, որոնց վրա գրված է «պատճեն» կամ «բնօրինակ» բառերը:

Համաձայն «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի էլեկտրոնային փաստաթղթի բնօրինակը գոյություն ունի միայն էլեկտրոնային կրիչի վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

2. Գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով հայտերի գնահատման արդյունքները, որոշեց.

ա/ ՀՀ ՈԿ ԳՀԱՊՁԲ-21/6 ծածկագրով հրավերի 8.8 կետով սահմանված պահանջների համաձայն կասեցնել հանձնաժողովի նիստը մեկ աշխատանքային օրով և հրավերով սահմանված կարգով տեղեկացնել մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

բ/ ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքներ նպատակով գնահատող հանձնաժողովի նիստ հրավիրել 2021թ. հունիսի 28-ին ժամը 14:15-ին ք. Երևան, Ծովակալ Իսակովի 29, «գնումների խումբ» աշխատասենյակ հասցեով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ - 0:

Հանձնաժողովի

նախագահ _____ Է.Հակոբյան

անդամներ՝ _____ Ս.Գասպարյան

_____ Ե.Վարդանյան

քարտուղար՝ _____ Գ. Ջանջուղազյան